

ՆԻՆԱ ԲԵՐԲԵՐՈՎԱՆ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ա. Յ. ԲԱՆՉԻՆՅԱՆ

Նինա Նիկոլաննա Բերբերովան (8.08.1901, Սանկտ Պետերբուրգ - 26.09.1993, Ֆիլադելֆիա) ռուս վտարանդիական գրականության ականավոր դեմքերից է: Ուսանել է Մոսկվայի հնագիտության ինստիտուտում և Դոնի Ռոստովի համալսարանի պատմաբանասիրական բաժնում: Ամուսնու՝ բանաստեղծ Վլադիսլավ Խոդասևիչի հետ 1922-ին տեղափոխվել է Բեռլին, որտեղ նրա թարգմանությամբ ռուսերեն լույս են տեսել Շոդերլո ղը Լակլոյի «Վտանգավոր կապեր» և Ռոմեն Ռոլանի «Մահաթմա Գանդի» գրքերը: 1924-ին նրանք հաստատվել են Փարիզում, որտեղ Բերբերովան դարձել է «Պոսլեդնիե նովոստի» ռուսերեն թերթի աշխատակիցը՝ հրատարակելով պատմվածքներ, բանաստեղծություններ, կինոքննադատական հոդվածներ, խորհրդային գրականության ժամանակագրություն: Վեպերով, վիպակներով և բանաստեղծություններով 1927-ից աշխատակցել է ռուս վտարանդիական մամուլին (Փարիզ, Բեռլին և Պրահա): Առանձին գրքերով և մամուլում լույս են տեսել Բերբերովայի մի շարք ստեղծագործություններ՝ «Բիյանկուրյան տոներ» (1929-1938), «Վերջինները և առաջինները. վեպ տարագիրների կյանքից» (1930), «Տիրակալուհին» (1932), «Ակկոմպանիատորուհին» (1935), «Չայկովսկի. մի կյանքի պատմություն» (1936), «Բորոդին» (1938), «Բլոկը և նրա ժամանակը» (1948, ֆրանսերեն) և այլն: Փարիզում 1940-ին սկսել է հրատարակվել մինչև օրս լույս տեսնող «Ռուսական միս» շաբաթաթերթը (ի դեպ, նախկին բաքվահայ նավթարդյունաբերողներ Ղուկասով եղբայրների միջոցներով), որի մշտական աշխատակիցն է դարձել Նինա Բերբերովան: 1950-ին հիմնական բնակություն հաստատելով ԱՄՆ-ում՝ ռուս գրականություն է դասավանդել Յեյլի և Փրինսթոնի համալսարաններում: ԱՄՆ-ում գրել է «Փոթորկի հրվանդանը» (1950-1951), «Ընդդոմն իմն է» (1966), «Երկաթե կինը. պատմություն Մ. Ջակրևսկա-Բենկենդորֆ-Բուդերգի, իր և իր ընկերների մասին» (1981), «Մարդիկ և օթյակներ. 20-րդ դարի ռուս մասոնները» (1986) գրքերը: Ընտրվել է Միդլբերի քոլեջի և Յեյլի համալսարանի պատվավոր դոկտոր: «Ակկոմպանիատորուհին» վիպակի ֆրանսերեն թարգմանությունից հետո նրա գրքերը լույս են տեսել գրեթե բոլոր եվրոպական լեզուներով և ճապոներեն, հեղինակին համեմատել են Չեխովի, Մոպսսանի և Նաբոկովի հետ՝:

Բերբերովան թերևս ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնի հայ իրականության համար՝ սուկ իր մասնակի (հոր կողմից) հայ ծագում ունենալուց բացի, եթե չլինեին նրա ստեղծագործական վաղ շրջանում ունեցած առնչությունները (թեկուզև թույլ) հայ գրականության հետ, ինչպես նաև իր կենսապատմի մեջ ներկայացրած ուշագրավ դրվագներն իր հայ նախնիների մասին:

¹ Բերբերովայի կենսագրությունը տես՝ "Не только курсы" (интервью К. Привалова с Н. Н. Берберовой, "Литературная газета", М., No 20, 17. V. 1989, էջ 15; Берберова Мина Николаевна, "Русское зарубежье: золотая книга эмиграции, первая треть XX века. Энциклопедический биографический словарь". М., 1997, էջ 75-77:

Նիկոլայ Բերբերովի (Բերբերյան) և Նատալյա Կարաուլովայի դուստրը՝ Նիան, հոր կողմից սերել է Նոր Նախիջևանի հայերից, իսկ մոր կողմից եղել ռուսացած թաթարական գերդաստանի շառավիղ: Իր հայ ծագման մասին Բերբերովյան բավականին խոսել է «Ընդգծումն իմն է» ինքնակենսագրական գրքում²: Ապագա գրողի մեջ հայկական արտահայտված ինքնության մասին խոսք լինել չի կարող. ռուսական հողում ռուս մորից ծնված և ռուս մշակույթով սնված Բերբերովյան իրեն ողջ կյանքում ռուս է զգացել: Ինչպես իրավամբ նկատել է «Ընդգծումն իմն է» գրքի մոսկովյան հրատարակության առաջաբանի հեղինակ Եվգենի Վիտկովսկին, «Բերբերովյան ոչ մի տեղ և երբեք իրեն չուզեց «բաժանել» երկու կեսի. ինչպես իր կյանքի կեսը նա չտվեց Հայաստանին, այնպես էլ կես կյանքը չտվեց ոչ Ֆրանսիային, ոչ Ամերիկային... Մի խոսքով, նա ռուս կին էր» (էջ 8): Իսկապես, Բերբերովյան էականորեն տարբերվում է, ասենք, Մարիետա Ծահիկյանից, որը, ռուս գրող լինելով հանդերձ, կապված է եղել իր արմատներին, գրել հայկական թեմաներով գրքեր, բազմիցս այցելել նախնիների հայրենիք, կատարել թարգմանություններ հայ գրականությունից: Բերբերովյան, Ծահիկյանի հետ ունենալով հանդերձ նույն անհական ծագումը, նրա պես չէր կարող ասել. «Ճակատագրի բերումով ծնվել եմ Ռուսաստանում... սակայն ես հայ եմ... արյունս մշտապես խոսում է... ես անեցի եմ»³: Եվ չնայած այս հանգամանքին՝ իր գործունեության վաղ շրջանում Բերբերովյան ևս անմասն չի մնացել հայկական ինչ-ինչ գործունեի ազդեցությունից: Նրա մակույթունը մասամբ անցել է նաև հայկական միջավայրում, և այն էլ՝ հայ մտավորականների շրջապատում, ինչը չէր կարող անհետք մնալ գրական հակումներ ունեցող աղջկա մեջ: Նա իր կենսագրության երկրորդ իսկ էջում հարկ է համարել նշել, որ ինքը հիշում է, թե երբ է իմացել, որ իր հայրը ռուս չէ (էջ 29), և որ ինքը շատ շուտ է զգացել երկու արյունների տարբերությունը:

Իր ինքնակենսագրության մեջ Բերբերովյան նշել է, որ ինքը որպես ճակատագրի պարզև կրում է երկու արյուն՝ հարավային (հայկականը) և հյուսիսային (ռուսականը): Նա խորությամբ իմացել է ինչպես մորական, այնպես էլ հորական նախնիների պատմությունը: «Հորական պապս՝ Իվան Միանակիչ Բերբերովյան այն անանուհի հայերի ժառանգներից էր, որոնք պատմական իրադարձությունների բերումով 18-րդ դարի կեսերին հայտնվեցին Ղրիմի հարավային ափերին՝ ծայրահեղ աղքատության մեջ: Պոտյոմկինն այդ մասին զեկուցեց Եկատերինային: Նա էլ որոշեց այդ մարդկանց Ղրիմից տեղափոխել և հող հատկացնել Դոնի ափերին... Հիշում եմ՝ Նախիջևան փոքրիկ քաղաքում (անվանված ի հիշատակ հին հայկական Նախիջևան քաղաքի), հայկական եկեղեցու դիմաց կանգնած էր Եկատերինայի հսկա բրոնզե արձանը «Եկատերինա Բ-ին՝ երախտապարտ հայերից» մակագրությամբ: ... Հայերի գործերը նոր հանգրվանում նախանձելիորեն լավ էին ընթանում» (էջ 52): Բերբերովյան չի նշել, որ Նոր Նախիջևանի հայերի նախնիները եղել են հայոց Անի մայրաքաղաքից: Այնուհետև նա մանրամասն պատմել է պապի՝ Իվան Միանակիչ Բերբերյանի (Հովհաննես Միանասի Բերբերյան, 1838-1917) մասին, որին համարել է իր տեսած ա-

² Տե՛ս **Нина Берберова, Курсив — мой, М., 1996**, էջ 51-59: (Հետագա մեքենումներն այս գրքից կարվեն շարադրանքի մեջ՝ փակագծում նշելով էջը): Այդ հատվածները տեղ են գտել «Этническая идентичность подростков из национально-смешанных семей» գրքում (Մ., 1993, էջ 52-58), իսկ հայերեն թարգմանությամբ լույս տեսել երկու անգամ՝ «Գրական թերթ» (20. III. 1991, էջ 3-4) և «Հայրենիքի ձայն» (7-13. IV. 1994, էջ 6-7) շաբաթաթերթերում՝ «Հայ մեծ հայրիկս» վերտառությամբ: Այս թարգմանությունը (որ բնավ հաջող չէ) կատարված է... անգլերենից (արտատպված Նյու Յորքի «Արարատ» անգլերեն քառամսյայից), Բերբերովյան ներկայացվել է որպես անգլիագիր հեղինակ, իսկ երկրորդ հրատարակման մեջ չգիտես ինչու նրա անունին վաղիսլավ խոդասևիչը նույնացվել էր Վլադիմիր Նաբոկովի հետ:

³ Տե՛ս **Գ. Աճեմյան, Հիշատակի խարույկ, Եր., 1999**, էջ 166:

նաջին եվրոպացին: Նոր Նախիջևանի հայտնի ազգայիններից է եղել Հովհաննես Բերբերյանը, որն ուսանել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, 1861-ին ավարտել Մոսկվայի համալսարանի բժշկական բաժինը, բժշկություն ուսանել նաև Փարիզում: Նա 1858-ին հրատարակել է «Աշխարհաբար այբբենարան» գրքույկը և նրան կից՝ «Ընթերցանության նյութեր տղայոց համար» ձեռնարկը, «Հյուսիսփայլում» թարգմանաբար հրատարակել Կարամզինի «Թըշվառ Լիզան» («Թշվառ եղիսաբեթ» վերնագրով): Նա եղել է Միքայել Նալբանդյանի կողմնակիցը, 1862-ին հանդիպումներ ունեցել նրա հետ Փարիզում, իսկ վերջինիս դագաղի վրա դամբանական խոսելու համար խուզարկվել է և հարցաքննվել⁴:

Հովհաննես Բերբերյանն ունեցել է յոթ որդի և մեկ դուստր: Որդիներից Նիկողայոսը (Նիկոլայ)՝ Նինա Բերբերովայի հայրը (1868-1942), Մոսկվայի համալսարանում ստացել է ֆիզիկոս-մաթեմատիկոսի կրթություն, եղել է պետական պաշտոնյա: Հորեղբայրներից Ռուբեն Բերբերյանը (1873-1942) եղել է հնչակյան կուսակցության անդամ և մամուլի գործիչ, իսկ Մինաս Բերբերյանը (1871-1919)՝ հրապարակախոս-թարգմանիչ, «Նոր դար» օրաթերթի խմբագիրը և Էջմիածնի Գևորգյան ճեմարանի ուսուցիչ, որը Յուրի Վենելովսկու հետ հրատարակել է «Армянские беллетристы» հատորները⁵: Նա է առաջին անգամ հայ գրականությունը ներկայացրել ֆիններեն՝ 1907-ին, «Վալվոյա» պարբերականում⁶: Ինչպես Բերբերովյանն էլ է «Ընդգծումն իմն է» գրքի անվանացանկում, Մինաս Բերբերյանը 1912-ին դատվել է Դաշնակցություն կուսակցության հիմնադրման համար և 1917-ին (իրականում պիտի լինի 1918) ընտրվել է Հայաստանի Հանրապետության ժողովրդական լուսավորության նախարար (էջ 639):

Իր հորեղբայրների մասին Բերբերովյան մասնավորապես գրել է, որ նրանք բոլորն էլ ուսում էին ստացել Մոսկվայի Լազարյան ճեմարանում՝ դառնալով բժիշկ, փաստաբան, մաթեմատիկոս, լրագրող, բանկիր: «Նրանք կանգնում էին ու ուսի, մտերմիկ շրջանով, մեկը՝ քաղաքացիական հագուստով, երկուսը՝ համալսարանական համազգեստով, երեքը՝ Լազարյան ինստիտուտի բանկոններով, և մեկը՝ ժանեկավոր օձիքով, նստում էր տատիկի ծնկին. բոլորը, կարծես դիտմամբ, հաղթանդամ էին, բարձրահասակ, գեղեցիկ, ավագները՝ սև մորուքներով, կրակոտ աչքերով, կրտսերները՝ լուրջ և մռայլ դեմքերով: ... հայկական կողմում ինքնատիպ կերպարներ էին, կյանքեր, ճակատագրեր: ... Նրանք կրքոտ էին: ... Նրանց մեջ կային առաջադեմ մարդիկ, որոնք պայքարում էին հանուն վեհ գաղափարների, որոնց պատվին հետագայում՝ 1918-ին, անվանվեցին ազատ Հայաստանի հանրապետության քաղաքների փողոցները: ... Նրանք փոթորկոտ կյանքի էին սովոր: Նրանց նախնիները ... դարեդար շարժվել են պարսից սահմաններից դեպի Կիլիկիա, մինչև Սև ծովի ափերը, որպեսզի վերածնվեն Դոնի պոնկին և հարյուր տարով դառնան այս շրջանի ազնվական խավը՝ հարուստ և կրթյալ» (էջ 53, 55):

«Ընդգծումն իմն է» գրքում Նինա Բերբերովյան նաև հիշել է, թե ինչպես պապի մոտ հյուրընկալվել են «գրողներ և բանաստեղծներ, հրապարակախոսներ, հասարակական գործիչներ, դաշնակցություն կուսակցության անդամներ: Ես չէի կարողում նրանց, ես չգիտեի նրանց լեզուն, ես միայն ճանաչում էի հայոց այբուբենի երկու տառը՝ Ն և Բ, որոնք նշված էին իմ սրբիչների և անձեռոցիկների վրա և ինձ շատ հարազատ, բայց տակավին խորհրդավոր աշխարհների պատկերներ էին (ընդգծումը մերն է - Ա. Բ.): Հինգ տարեկանում ես հանդիպեցի հայոց կաթողիկոսին» (էջ 57): Սա խիստ ուշագրավ դրվագ է, քանի որ

⁴ Տե՛ս Գ. Ստեփանյան, Կենսագրական քառարան, Ռատոր Ա, Եր., 1973, էջ 196:

⁵ Տե՛ս նույն տեղը:

⁶ Տե՛ս Minas Berberian, Kuvauksia Armeniasta, "Valvoja", Helsinki, 1907, էջ 77-94, 617-629:

1906 թվականին, երբ Բերբերովյան հինգ տարեկան էր, հայոց կաթողիկոսը Խրիմյան Հայրիկն էր, որին ոուս վիպասանուհին հիշել է առանց անունը տալու: «Նա ամբողջովին մանուշակագույնի մեջ էր... Ինձ թույլատրեցին հորեղբորս երեխաների հետ մոտենալ օրհնություն ստանալու: ...Երեխաներից ոչ ոք չէր մոտենում նրան: Ես որոշեցի, որ կաթողիկոսը նստել-սպասելով ձանձրանում է և չզգալով պահի նշանակալիությունը (և ինչպես միշտ, վախենալով կորցնել թանկագին ժամանակը) մոտեցա նրան և միանգամայն անփույթ մեկնեցի ձեռքս ողջույնի: Նա բարև չառավ, այլ մանուշակագույն ձեռքը դրեց զրլիսիս և աղոթք կարդաց՝ ծանոթ «տեր ողորմյա» բացականչությամբ և համբուրել տվեց իր մեծ մանուշակագույն մատանին» (էջ 57-58): Այս «տեր ողորմյան» Բերբերովայի ստեղծագործության մեջ օգտագործված (և թերևս, ողջ կյանքում մտապահված) միակ հայերեն արտահայտությունն է, որ նա գրել է «Тер бохормя» ձևով: Պատկերը հուզիչ և թերևս խորհրդանշական է՝ Խրիմյան Հայրիկն օրհնում է ոուս վտարանդիական գրականության ապագա նշանավոր դեմք Նինա Բերբերովային...

Հայ իրականությանն առնչվող մանկական այս հուշերին հետևել է «հայկական» մի կարճ շրջան Նինա Բերբերովայի պատանեկության տարիներին, երբ նա 1917-ի հեղաշրջման պատճառով ստիպված է եղել որոշ ժամանակով հեռանալ Պետերբուրգից և ապրել Նոր Նախիջևանում, «որտեղ «երախտապարտ հայերը» դեռևս սպիտակ հաց էին ուտում, և երբ իմ հորը կրճատեցին, մեզ ոչինչ չէր մնում անել, քան Օրշի և Կիևի վրայով մեկնել Ռոստով» (էջ 128-129): «Ընդգծումն իմն է» գրքի հավելված կենսագրական տեղեկատուում Բերբերովյան Նախիջևանը հիշել է որպես Դոնի Ռոստովի մոտ գտնվող մի քաղաք, «որի մասին Մայակովսկին ասել է. «Նախիջևան բառը հիանալի է, տակալին ոչ ոք չի օգտագործել պոեզիայում» (1926 թ. փետրվարի 7-ի ելույթից)» (էջ 681): Ռոստովում Բերբերովյան ճանաչել է Մարտիրոս Սարյանին և Մարիետա Ծաֆինյանին, որին հետագայում մի քանի անգամ հանդիպել է նաև Մոսկվայում: Հիշելով սույն տարիները՝ Բերբերովյան իր հուշերում նշել է. «Բոլորը ծառայում էին: Եվ ուրախանում էին տաքության համար, երբ շուկայում ձուկ էր հայտնվում, որը նկարիչ Սարյանը, երկու մատներով բռնելով խոհկենդից, տարավ իր տուն և եփելուց առաջ մի նատյուրմորտ պատկերեց յուղաներկով, շուրջը սոխ և գազար դրած: Իսկ Մարիետա Ծաֆինյանը, ինքնաշեն չուտերով և ինչ-որ կուրտկայով, որը լավ ժամանակներ էր տեսել, մտահոգ անցնում էր մեր լուսամուտի տակով, կրծքին մի հսկա ոսկոր սեղմած, որն այնպիսի տեսք ուներ, կարծես արդեն մաքուր կրծած լինեին: Նրանք ինձ հիշեցնում էին, որ մեկ այլ կյանք գոյություն ունի» (էջ 135): Ի դեպ, Ծաֆինյանն իր գրվածքներից մեկում հիշել է Բերբերովային՝ առանց անունը տալու, ինչի մասին վկայել է Բերբերովյան ինքը (էջ 156):

Ռոստովում Նինա Բերբերովյան հանդիպել է իր մտերիմ ընկերուհիներից մեկին՝ Վիրժինչիկին, որի ազգությունն իր հուշերում թեև չի նշել, սակայն նա եղել է առնվազն կես հայ, որի հայրը «լքել է նրա մորը, երբ վերջինս հղի էր աղջկանով, և հիմա Երևանում ակնառու կուսակցական գործիչ էր դարձել, որ զրնդակահարում, կախում և խուզարկելու էր ուղարկում նրանց, ովքեր դեռ օպայած օձիքներ էին կրում» (էջ 132-133): Բերբերովյան Վիրժինչիկին նկարագրել է որպես մի սևաչյա և սևահեր նիհար աղջկա, որը թոքախտից մահացավ Եվրոպայում՝ մահից առաջ ընդունելով ուղղափառություն և Նինայի անունը (էջ 130):

Պեն չկան ուղղակի փաստեր, սակայն Բերբերովյան ոուսերեն թարգմանություններով որոշ չափով ծանոթ էր հայ գրականությանը: Նույնիսկ մանրակրկիտ քննությամբ թերևս կարելի է հայ պոեզիայի ինչ-որ արձագանքներ նշմարել նրա վաղ շրջանի բանաստեղծություններում: Հայտնի է, որ նա մասնակցել է Վալերի Բրյուսովի պատվին պետերբուրգի հայերի կազմակերպած

հանդիսությունը (էջ 103): Ի դեպ, Բերբերովայի ապագա ամուսինը՝ Վլադիսլավ Խոդասևիչը, թարգմանություններով մասնակցել է Բյուրսովի «Հայ բանաստեղծություն» ժողովածուին, որտեղ նրա թարգմանությամբ ընդգրկվել են մեկ քերթված Մկրտիչ Պեշկոբաշլյանից, երկուական բանաստեղծություն Սմբատ Ծահագիզից և Թումանյանի «Մի կաթիլ մեղրը»⁷: Նրա գրառումներում հետագայում Նիհան կարդացել է. «Հայեր, ֆիններ, հրեաներ – Խոդասևիչի ռուսերեն թարգմանությունները» (էջ 182):

1997-ին Մոսկվայում լույս տեսած «Ռուսական արտերկիր. տարագրության ոսկե գիրքը» կենսագրական հանրագիտակ բառարանում նշված է, որ Բերբերովայի առաջին բանաստեղծությունները լույս են տեսել 1922-ին «Գետահեններ» ժողովածուում⁸: Եվգենի Վիտկովսկին նշել է. «...հայերեն, ինչպես Բերբերովան ինքն է գրել «Ընդգծում»-ում, նա իմացել է ընդամենը երկու տառ... ինչպես նաև նրան հայերեն օրհներ է կաթողիկոսը... Միայն այսքանը» (էջ 8): Սակայն միայն այսքանը չէ: Ռուս մասնագետներին հայտնի չէ, որ դեռ 1917-ին 16-ամյա Նիհա Բերբերովան աշխատակցել է Մոսկվայի «Արմյանսկի վեստնիկ»-ին՝ հրատարակելով «Հայաստան» և «Ալեքսանդր Ծատուրյանի հիշատակին» քերթվածները⁹: Սա բավական պերճախոս փաստ է, որ չի հիշատակվել գրողի ինքնակենսագրության մեջ և տակավին անծանոթ է մնում ռուս գրականագիտությանը:

«Հայաստան. տրիոլետները» հավանաբար Նիհա Բերբերովայի առաջին տպագիր ստեղծագործությունն է: Ներկայացնում ենք այդ բանաստեղծությունը (նոր ռուսական ուղղագրությամբ).

АРМЕНИЯ Триолеты

1.

Средь гор седых, в ущельях темных,
На юге северной земли,
Есть край, жутки его пути,-
Армения в ущельях темных,
Сердец больных и утомленных
Приют страдавших годы, дни-
Армения в ущельях темных,
На юге северной земли.

3.

Придите, и в ущельях темных,
На юге северной земли,
Сложите тяжести тоски,
И будет свет во взглядах темных.
В сердцах устало-утомленных
Тоску так тяжело нести!...
Пусть грусть умрет в ущельях темных,
На юге северной земли!

2.

Ее пути хранят сказанья,
Сказанья нежной той страны -
Они чудны, они странны,
Те песни, сказки и сказанья!
В них столько скрытого стра-
данья,
Всего одной тоской полны...
Гортанны чудные сказанья,
На юге северной страны.

⁷ Տե՛ս «Поэзия Армении с древнейших времен до наших дней, под редакцией, со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова», М., 1916, էջ 289-290, 360, 432:

⁸ Տե՛ս «Русское зарубежье...», էջ 75:

⁹ Տե՛ս **Нина Берберова**, Армения, «Армянский вестник», М., н. 13, 26.III.1917, էջ 13; նույնի, Памяти Александра Цатуряна, там же, н. 20, 21.V.1917, էջ 8: Վերջին բանաստեղծությունը մենք վերահրատարակել ենք Երևանի «Ինստիտուտիկա Արմեն-գիտ» օրաթերթում (2. V. 1994, էջ 4):

Ինչպես տեսնում ենք՝ Բերբերովայի համար երբեք չտեսած Հայաստանը համենայն դեպս մի «քնքուշ երկիր» է, որ կարելի է նաև բնորոշել գրողի՝ վերոբերյալ բնութագրմամբ. «շատ հարազատ, բայց տակավին խորհրդավոր» աշխարհ էր: «Արմյանսկի վեստնիկը», ինչպես հայտնի է, հասարակական-քաղաքական և գրական մասագիր էր, որ լույս է տեսել 1916-1918 թթ.՝ ռուս հասարակայնությանը լայնորեն ներկայացնելով ինչպես հայ ժողովրդի քաղաքական վիճակն առաջին աշխարհամարտի տարիներին, այնպես էլ նրա գրականությունը, լայնորեն տեղ տալով ռուս բանաստեղծների հայապատում ստեղծագործություններին և նաև ռուսերեն ստեղծագործող հայերի գրական փորձերին: Հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին ռուսաբանակ մտավորականներից շատերը, մտահոգված իրենց ազգի ապագայով, տարբեր գրություններում արտահայտել են իրենց տազնապներն ու հույսերը Հայաստանի ներկայի և գալիքի վերաբերյալ: Նման տրամադրությունների տիպիկ արտահայտություն են Բերբերովայի վերոբերյալ տրիոլետները:

1917-ին Թիֆլիսում մահացել է Ալեքսանդր Մատուրյանը: Նրա կյանքի մեծ մասն անցել է Մոսկվայում, բավական թարգմանվել է ռուսերեն, ուստի դեռատի Բերբերովան պիտի որ լավ ծանոթ լիներ նրա ստեղծագործությանը և հավանաբար նաև հանդիպած: Նույն թվականին թերևս բանաստեղծի մահվան թարմ տպավորության տակ է գրվել Բերբերովայի «Ալեքսանդր Մատուրյանի հիշատակին» բանաստեղծությունը.

ПАМЯТИ АЛЕКСАНДРА ЦАТУРЯНА

Так мало надо для поэта,
 Чтоб быть веселым и счастливым,
 Лишь запах розы, отблеск света,
 Слова любви и взор пыливый,
 Луч солнца, ветра дунавенье.
 Зарницы дальней бледный трепет,
 Во сне — неясное виденье,
 В листве весенней — птичий лепет,
 И счастлив он! ... Но почему же,
 Если легко дается счастье,
 Когда глядишь в поэта глубже,
 Всегда в нем сумрак и ненастье!

Այս, ինչպես նաև նախորդ մեքերված բանաստեղծությունը պատանեկան քնարի շարքային արտահայտություններ են, որ սակայն ունեն գրապատմական անուրանալի արժեք: Երկուսում էլ առկա են Բերբերովայի ստեղծագործությանը բնորոշ փոքր-ինչ անզգացմունք խոսքը. «Հայաստան»-ում նրա արտահայտածը, սրտի խոսք լինելով հանդերձ, մեծ մասամբ զերծ է զգացմունքայնությունից¹⁰: Անհիմն չէ մտածել, որ Բերբերովայի երկրորդ բանաստեղծությունը թերևս արձագանքը լինի Մատուրյանի «Հոգիս մոռյալ...» քերթվածում արտահայտված տրամադրության, որն Իվան Բունինի ռուսերեն թարգմանությամբ (կատարված 1902-1903 թթ., "Мрачна, темна душа моя..." վերնագրով) ընդգրկվել է Բրյուսովի կազմած ժողովածուում¹¹:

Բերբերովան Յուրգիս Բալթրուշայտիսից հետո երկրորդ ռուսալեզու բանաստեղծն է, որ քերթված է ձոնել Ալեքսանդր Մատուրյանի հիշատակին: Ի դեպ, Բալթրուշայտիսի «Ալեքսանդր Մատուրյանի հիշատակին» բանաստեղծությունը, որ առաջին անգամ լույս է տեսել հեղինակի «Օուշան և մանգաղ» ժո-

¹⁰ Այդ իսկ պատճառով մենք հակված չենք կարծելու, որ Բերբերովան է «Արմյանսկի վեստնիկ»-ում N ծածկանունով հրատարակած «Հայաստանին» զգացմունքային արձակ բանաստեղծության հեղինակը (1917, թ. 6, էջ 12):

¹¹ Տե՛ս «Поэзия Армени», էջ 315:

ղովածուում (Փարիզ, 1948), հետաքրքիր պատահականությամբ հրատարակել է Նիճա Բերբերովան¹²:

Այսպիսով, իր ստեղծագործական առաջին փորձերը հրատարակելով այլալեզու հայ մամուլում, Բերբերովան հարազատանում է օտարալեզու հայազգի գրողների ընտանիքին, որոնք մինչ օտար գրական միջավայրում իրենց տեղը գտնելը հանդես են եկել հայ մամուլում, ավելին՝ հայ իրականությանն առնչվող ստեղծագործություններով: Նույնն է կատարվել օտարալեզու հայազգի այնպիսի հեղինակների հետ, որպիսիք են Մայքլ Առլենը և Վիլյամ Սարոյանը:

Տարագրության մեջ Նիճա Բերբերովայի շփումները հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ սահմանափակվել են իր նման Ռուսաստանից տարագրված հայերի հետ ծանոթություններով և մտերմությամբ (տնտեսագետ Վահան Թոթովյանց, ռուսական դրամայի մի քանի հայազգի անդամներ): Հայ կյանքին առնչվող դրվագները նա հիշել է այլ իրադարձությունների հետ կապված, քանի որ անմիջականորեն չի հետաքրքրվել և ապրել դրանցով, ինչպես՝ Թալեաթ փաշայի սպանության և Բեռլինի դատավարության հիշատակումն «Ընդգծումն իմն է» գրքում (էջ 488): Իր ինքնակենսագրության՝ երկրորդ աշխարհամարտի տարիների գրառումներում նա հիշել է, որ մասնակցել է Փարիզի հայկական եկեղեցում Ռ.-ի հուղարկավորությանը: Խոսքն անշուշտ իր հորեղբոր՝ Ռուբեն Բերբերովի մասին է, որը վախճանվել է 1942 թվականին: Բերբերովան նշել է, որ հանգուցյալը չափից ավելի է մեծարվել, չնայած որ նա իրենից հետո ոչինչ չի թողել և որ նա ընդամենը «ճանաչել է Թումանյանին և Պատկանյանին, երբ եղել է քսանհինգ տարեկան» (էջ 481):

Իր ճանաչած հայ մտավորականներից շատերի անունները Նիճա Բերբերովան տվել է «Մարդիկ և օթյակներ. 20-րդ դարի ռուս մասուններ» գրքում (1986): Փարիզի և ԱՄՆ-ի արխիվներում պրպտումներ կատարած Բերբերովան, որ անձամբ ճանաչել է ռուս մասուններից շատերին և նամակագրություն ունեցել նրանց հետ, իր գրքում ընդգրկել է 660 անունից բաղկացած մի կենսագրացանկ, որտեղ կան նաև 25 հայկական ազգանուն: Այս հարցում կարևոր դեր է խաղացել թերևս այն հանգամանքը, որ մասուններ են եղել արձակագրուհու հորեղբայրները՝ Մինաս և Ռուբեն Բերբերյանները և վերջինիս որդին՝ Լեոն Բերբերովը (1903-1972): Իր այս աշխատությամբ Բերբերովան մի անսպասելի նվեր է մատուցել հայ պատմաբաններին, վկայելով, որ հայ մտավորականների մի ոչ փոքր մաս եղել է ռուսական մասնության անդամ: Դրանց մեջ կան այնպիսի հայտնի անուններ, որպիսիք են իշխան Գեորգի Թումանովը, ցարական դիվանագետ Իոսիֆ Լոռիս-Մելիքովը (1860-1950), Ալեքսանդր Խատիսյանը (1874-1945), Սիմոն Վրացյանը (1882-1969), Ռուսական պետական դրամայի անդամներ Մոխեսյ Աճեմովը (Աճեմյան, 1878-1950) և Պապաջանովը, ականավոր գիտնական Ալեքսեյ Զիվլեգովը (1875-1952), մաթեմատիկոս Երվանդ Քողբեթյանցը (1888-1976) և այլք¹³:

Նշված գործիչներից բացի Բերբերովան ողջ կյանքի ընթացքում ճանաչել է իր նման Ռուսաստանից արտագաղթած հայազգի ուրիշ մտավորականների: 1950-ին «Ռուսկայա միսլ» շաբաթաթերթում ներկայացրել է ռուսագիր հայազգի բանաստեղծ Յուրի Զանուսովի քերթվածներից¹⁴: Նյու Յորքում լույս տեսած նրա մի քանի գրքի պատկերազարդողն է եղել Ռուսաստանից արտագաղթած, «Լիտերատուրնայա գազետայի» նախկին նկարիչ և քանդակագործ Վահրիճ Բախչանյանը: Նրա հետ ծանոթ է եղել մեկ այլ ամերիկաբնակ հայազգի գրող՝ Սերգեյ Դովլատովը, իսկ մոսկվաբնակ կինոբեմադրիչ Վասիլի Բաթանյանը

¹² Տե՛ս Ա. Արամյան, Ալեքսանդր Ծատուրյանը և ռուս գրականությունը, «Հայ գրականության միջազգային կապերը», 1, Եր., 1983, էջ 106:

¹³ Այդ հատվածները մենք թարգմանել և ներկայացրել ենք Երևանի «Անդրադարձ» թերթում («Նիճա Բերբերովան և հայ մասունները», թ. 20 (86), 10-16.X.1992, էջ 2):

¹⁴ Տե՛ս «Русская мысль», Париж, 11.VIII.1950:

